## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*
## ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*04.08.2021թ.* *ք.Երևան*

*Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Աննա Զաքարյանս ուսումնասիրելով 20.07.2021թ. վերսկսված թիվ 05028508 կատարողական վարույթի նյութերը*

## *Պ Ա Ր Զ Ե Ց Ի*

*Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 21.01.2020թ. տրված թիվ ԵԴ/1575/02/19 կատարողական թերթի համաձայն պետք է Գագիկ Մերուժանի Մուրադյանից հօգուտ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ բռնագանձել 656351 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:*

*Պարտապանից բռնագանձել նաև ընդհանուր բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:*

*Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Գագիկ Մերուժանի Մուրադյանը Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ներկայացրել տեղեկանք առ այն, որ աշխատում է «ՍԱՄ ԿԱՐ ՇԻՆ» ՍՊԸ-ում որպես ամրանագործ:*

*Պարտապանի վերաբերյալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնում առկա են բռնագանձման բնույթի այլ կատարողական վարույթներ:*

*Կատարողական վարույթով բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապան Գագիկ Մերուժանի Մուրադյանի ողջ գույքի վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելի չափով բավարար չէ պահանջատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար և պարտապանին պատկանող գույք և այլ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, որոնց վրա կարելի է բռնագանձում տարածել:*

*Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1 հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով*

## *Ո Ր Ո Շ Ե Ց Ի*

***1.*** *Կասեցնել 20.07.2021թ. վերսկսված թիվ 05028508 կատարողական վարույթը՝ 90-օրյա ժամկետով:*
***2.*** *Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին՝ նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:*
***3.*** *Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:*

*Որոշման պատճենն ուղարկել կողմերին:*

*Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված ժամկետներում:*

*«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները*

*ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ*
*ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԻՏԱՆ* *Ա. ԶԱՔԱՐՅԱՆ*

Digitally signed by ZAKARYAN
ANNA 6302890403
Date: 2021.08.04 14:58:24 AMT